ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՕՐՀՆԵՑ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ

Օգոստոսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օրհնվեց Շիրակի թեմի Մարմաշեն գյուղի վերանորոգված եկեղեցին:

Մարմաշենի վանական համալիրը երեք փաճարների մի գեղեցիկ համադրություն է, 11-րդ դ. կառույց և պատկանում է Անիի ճարտարապետական դպրոցին: Այն մեծապես վնասվել էր հատկապես 1988-ի երկրաշարժի հետևանքով: 1991 թ. իտալացի ճարտարապետներ Գայանե Կազնատին (մայրը՝ հայ) և Մարիա Միմոն ձեռնարկեցին վանքի վերանորոգության աշխատանքները: Հայ-իտալական վարպետների համատեղ ջանքերով վերանորոգման աշխատանքներն ավարտվեցին Հայաստանում Իտալիայի դեսպանության հովանավորությամբ և Հայաստանի Հուշարձանների պահպանության վարչության օժանդակությամբ:

Արարողության սկզբում Իտալիայի դեսպանը, Գայանե Կազնատին, Հուշարձանների պահպանության վարչության տնօրեն Գագիկ Գյուրջյանը և ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը հանգամանալից ներկայացրեցին եկեղեցու վերակառուցման աշխատանքների ընթացքը:

Ապա Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքի խոսքը հղեց Իտալիայի դեսպանին, հանձին նրա՝ իտալացի ժողովրդին, վերնորոգության աշխատանքները նախաձեռնող և իրականացնող Գայանե Կազնատիին ու նրա աշխատակից ընկերներին, Հուշարձանների պահպանության վարչությանը և բոլոր նրանց, ովքեր աջակցել են այս աստվածահաճո ձեռնարկի իրականացմանը: Նորին Սրբությունը, անդրադառնալով հատկապես եկեղեցաշինության նշանակությանն ու կարևոր խորհրդին, նշեց. *«Այս եկեղեցին մեզ համար միայն պատմական հուշակոթող չէ: Եկեղեցու նորոգությունը նշանակում է նորոգություն հավատքի, ժողովրդի, նորոգություն Աստված-մարդ խաչված հարաբերության: Այսօր մենք այս վերանորոգված հարաբերության ճանապարհի անդրանիկ ուխտավորներն ենք, որ եկել ենք աղոթքի կանգնելու այս նվիրական տաճարի կամարների ներքո, ուր փառավորվում է եղբայրությունը Իտալիո և հայ ժողովուրդների: Հոգևոր արժեքների վերանորոգումը, պահպանությունը և այն սերունդներին ավանդելը միայն բավարար չեն: Այդ արժեքները պետք է դառնան ապրող սերնդի կյանքի անբաժանելի մասնիկը, շաղախը նրանց կյանքի, գոյության ու լինելության»:*

Արարողության վերջում Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց նաև նորապսակ Գայանե Կազնատիին ու նրա ամուսնուն: Նորին Սրբությանը ուղեկցում էին Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Տ. Սիոն եպս. Ադամյանը, Տ. Գեղարդ աբդ. Վահունին, Շիրակի թեմի հոգևոր հայրեր: Արարողությանը ներկա էին բազմաթիվ հյուրեր, հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ